ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ---------- 2021 թվական N ____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

### ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Իրավաբանական վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| | **Իրավաբանական վարչություն** | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | վարչության պետ | 1 | 697,000 | | 697,000 |
| 2 | վարչության պետի տեղակալ | 2 | 561,000 | | 1,122,000 |
| 3 | գործավար | 1 | 248,200 | | 248,200 |
| - | **Իրավական ակտերի մշակման և փորձաքննության բաժին** | | | | |
| 4 | բաժնի պետ | 1 | 408,000 | | 408,000 |
| 5 | գլխավոր մասնագետ | 2 | 289,000 | | 578,000 |
| 6 | առաջատար մասնագետ | 2 | 282,200 | | 564,400 |
| 7 | առաջին կարգի մասնագետ | 1 | 272,000 | | 272,000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| - | **Դատական գործերի վարման բաժին** | | | | |
| 8 | բաժնի պետ | 1 | 408,000 | | 408,000 |
| 9 | գլխավոր մասնագետ | 3 | 289,000 | | 867,000 |
| 10 | առաջատար մասնագետ | 6 | 282,200 | | 1,693,200 |
| 11 | առաջին կարգի մասնագետ | 1 | 272,000 | | 272,000 |
| - | **Ստորաբաժանումներում և համայնքային ենթակայության կազմակերպություններում իրավաբանական աշխատանքների համակարգման բաժին** | | | | |
| 12 | բաժնի պետ | 1 | 408,000 | | 408,000 |
| 13 | գլխավոր մասնագետ | 2 | 289,000 | | 578,000 |
| 14 | առաջատար մասնագետ | 3 | 282,200 | | 846,600 |
| 15 | առաջին կարգի մասնագետ | 1 | 272,000 | | 272,000 |
| - | **Վարչական բողոքների ուսումնասիրության բաժին** | | | | |
| 16 | բաժնի պետ | 1 | 408,000 | | 408,000 |
| 17 | գլխավոր մասնագետ | 2 | 289,000 | | 578,000 |
| 18 | առաջատար մասնագետ | 3 | 282,200 | | 846,600 |
| 19 | առաջին կարգի մասնագետ | 1 | 272,000 | | 272,000 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **35** | | | **11,339,000** |

»

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «681.5» և «226,012,400» թվերը փոխարինել համապատասխանաբար «698.5» և «231,112,400» թվերով.

3) «Ամբողջը» տողում «2005.5» և «608,886,400» թվերը փոխարինել համապատասխանաբար «2022.5» և «613,986,400» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետի 04.06.2015 թվականի թիվ 1704-Ա որոշմամբ հաստատվել են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մի շարք վարչությունների կանոնադրությունները, այդ թվում՝ իրավաբանական վարչության:

Աշխատակազմի իրավաբանական վարչությունը նշված կանոնադրության համաձայն իրականացնում է մի շարք լիազորություններ, մասնավորապես՝

1. ապահովում է քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, Երևանի ենթակայության կազմակերպությունների իրավական աջակցությունը,

2. մշակում է իրավական ակտերի, պայմանագրերի նախագծեր.

3. ստուգում է Երևանի քաղաքապետին ներկայացվող որոշումների և կարգադրությունների նախագծերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը և նշագրում դրանք.

4. քաղաքապետարանում քննարկվող իրավական լուծումներ պահանջող հարցերի վերաբերյալ տալիս է մասնագիտական եզրակացություններ.

5. ապահովում է Երևանի քաղաքային համայնքի և քաղաքապետարանի աշխատակազմի շահերի պաշտպանությունը ՀՀ դատական մարմիններում, ԴԱՀԿ ծառայությունում.

6. այլ գործառույթներ:

Նշված գործառույթների իրականացման ընթացքում վարչությունը 2020 թվականի ընթացքում ստացել է և քննարկել է 15.859 փաստաթուղթ, իսկ նախապատրաստել է 8.224: Վարչությունում մշակվել կամ քննարկվել և նշագրվել են Երևան քաղաքի ավագանու 123 որոշումների, Երևանի քաղաքապետի 5054 որոշումների և 1127 կարգադրությունների նախագծեր: Վարչության կողմից իրականացվում է շուրջ 1700 դատական գործի վարում:

Վարչության պետը յուրաքանչյուր աշխատանքային օր մասնակցում է շուրջ 5 աշխատանքային քննարկումների Երևանի քաղաքապետարանում՝ ավագանու անդամների, քաղաքապետի, քաղաքապետի տեղակալների, քաղաքապետի

խորհրդականների, աշխատակազմի քարտուղարի մասնակցությամբ և այլ մարմիններում:

Բացի վերը նշվածից վարչությունը իրականացնում է նաև այլ բազմաթիվ բանավոր հանձնարարականներ և աշխատանքներ:

Վարչությունը բաղկացած է ընդհանուր 18 աշխատակցից, ովքեր ընդգրկված են 4 տարբեր բաժիններում, սակայն վերը նշված աշխատանքների ծավալը հաշվի առնելով, երկու բաժինների աշխատակիցները փաստացի չեն իրականացնում իրենց առջև դրված գործառույթը և նշված աշխատակիցները նույնպես իրականացնում են վերը նշված աշխատանքները՝ մասնակցում են դատական նիստերի, մշակում են իրավական ակտերի նախագծեր և այլն:

Ներկայումս առաջարկվող փոփոխությամբ առաջարկվում է վարչության վերը նշված գործառույթները 18 աշխատակցի փոխարեն իրականացնել 23 աշխատակցի միջոցով, մասնավորապես նոր նախատեսված 5 հաստիքից 4 հաստիքը նախատեսվում է Երևան համայնքի մասնակցությամբ դատական գործերի վարումը իրականացնելու համար: Բացի այդ, նախատեսվում է նշված աշխատակիցների միջև աշխատանքների բաժանումը իրականացնել ըստ մասնագիտացումների և վարչության պետի փոխարեն որոշ դեպքերում աշխատանքային քննարկումներին ապահովել նրանց մասնակցությունը՝ վարչության աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Վարչությունում նախատեսվող նոր 12 հաստիքներն առաջարկվում է ընդգրկել երկու բաժնում, որոնցից մեկը գոյություն ունի (անվան մեջ կատարվում են որոշ փոփոխություններ), իսկ մյուսը ստեղծվում է նախկինում գոյություն ունեցող բնակիչների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության բաժնի փոխարեն:

Ստորաբաժանումներում և համայնքային ենթակայության կազմակերպություններում իրավաբանական աշխատանքների համակարգման բաժնում առաջարկվող 7 աշխատակիցը իրականացնելու են Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում և շուրջ 500 կազմակերպություններում իրավաբանական աշխատանքների համակարգումը, որի արդյունքում այսուհետ հնարավորություն կստեղծվի բոլոր վարչական շրջանների և կազմակերպությունների կողմից իրականանցել օրենքի միատեսակ կիրառություն: Նշված բաժնի կողմից ստորաբաժանումներին և համայնքային ենթակայության կազմակերպություններին տրամադրվելու են պարզաբանումները, տրվելու են մեթոդաբանական ցուցումներ, դրանց գործունեության

արդյունավետության նպատակով ուսումնասիրվելու բացահայտվելու են առկա խնդիրները, այդ թվում՝ օրենսդրական, միջոցներ են ձեռնարկվելու դրանց կարգավորման նպատակով և այլն:

Բացի այդ, նախատեսվում է Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում և շուրջ 500 կազմակերպություններում առկա որոշ կարևորություն ունեցող դատական գործերի և այլ գործընթացների նկատմամբ իրականցնել ամենօրյա հսկողություն, իսկ անհրաժեշտության դեպքում նաև նոր ներգրավող մասնագետների կողմից նշված գործերի իրականացում, որի արյդունքում նախատեսվում է ավելացնել վարչական շրջանների աշխատակազմերի կողմից եկամուտների հավաքագրումը, ինչպես նաև կազմակերպությունների սեփական եկամուտների ավելացումը, որի արդյունքում Երևան համայնքը ստիպված չի լինի նշված կազմակերպություններին տրամադրել լրացուցիչ ֆինանսավորում՝ տնտեսելով մեծ չափով ֆինանսական միջոցներ:

Իրավաբանական վարչության կազմում նախատեսված վարչական բողոքների ուսումնասիրության բաժինը նախատեսվում է կազմավորել 9 աշխատակցից:

Նշված բաժնի կողմից իրականացվելու է Երևանի քաղաքապետարան ներկայացված բողոքների ուսումնասիրություն և վարչական վարույթների լսումներ, որի արդյունքում կազմվելու են եզրակացություններ նշված բողոքների վերաբերյալ և եզրակացություններ են ներկայացնելու բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց:

Ներկայումս բողոքների ուսումնասիրությամբ զբաղվող առանձին ստորաբաժանում չլինելու պայմաններում, բողոքը ուսումնասիրվում է նույն մասնագետի կողմից ում գործողությունների դեմ բողոքը ներկայացված է, ինչն առաջացնում է քաղաքացիների դժգոհությունը և որոշ դեպքերում հակասում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթներին: Բացի այդ, հնարավոր է նույն մասնագետի կողմից իրականացվի սուբյեկտիվ մոտեցում: Առաջարկվող փոփոխության արդյունքում իրականացվելու են բողոքների մասնագիտական ուսումնասիրություններ, ինչը հնարավորություն կստեղծի նվազեցնել Երևան համայնքի մասնակցությամբ դատական գործերի քանակը և, ինչն ավելի կարևոր է, այսուհետ կիրականացվի բողոքների ուսումնասիրություն այլ մասնագետների կողմից, ինչի արդյունքում հնարավորինս կնվազեցվի հնարավոր անձնավորված վերաբերմունքը և որոշումները կկայացվեն առավել օբյեկտիվ:

Միաժամանակ հաշվի առնելով վարչության կազմում նոր երկու գործառույթի ավելացումը և նշված վարչության ծանրաբեռնվածությունն առաջարկվում է նախատեսել վարչության պետի տեղակալի ևս մեկ հաստիք՝ բաժինների համակարգումը և աշխատանքների կազմակերպումն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի էական փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ